ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Գյուղատնտեսությունը Լեռնային Ղարաբաղում տնտեսության զարգացման, զբաղվածության ապահովման և բնակչության ընդհանուր կենսամակարդակը պայմանավորող կարևորագույն ոլորտներից մեկն է: Ելնելով դրանից՝ վերջին տարիներին երկրում կտրուկ ավելացել են պետական բյուջեից գյուղատնտեսության ոլորտին հատկացվող միջոցները. 2016 թվականին գյուղատնտեսական ոլորտի ծրագրերի իրականացման նպատակով պետական բյուջեից հատկացվել է մոտ 3,8 մլրդ դրամ, 2007 թվականին այս ցուցանիշը կազմում էր ընդամենը 265,2 մլն դրամ: 2016 թվականին ֆինանսավորումը 2007 թվականի նկատմամբ աճել է 14,2 անգամ:

Հաշվետու տարում գյուղատնտեսության համախառն ներքին արդյունքը կազմել է 30,3 մլրդ դրամ, գյուղատնտեսության համախառն արտադրանքը՝ 68,5 մլրդ դրամ, այդ թվում բուսաբուծություն՝ 36,0 մլրդ դրամ, անասնաբուծություն՝ 32,5 մլրդ դրամ: Երկու ոլորտների տեսակարար կշիռն ընդամենի նկատմամբ կազմել է, համապատասխանաբար, 52,6 և 47,4 տոկոս:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԽԱՌՆ ԱՐՏԱԴՐԱՆՔՆ ԸՍՏ ՃՅՈՒՂԵՐԻ

	2007 թ. /մլրդ դրամ/	Տեսակարար կշիռը	2008 թ. /մլրդ դրամ	Տեսակարար կշիռը	2016 թ. /մլրդ դրամ	Տեսակարար կշիռը	Աճի տեմպը /անգամ/	
							2016 թ. 2007 թ. նկատմամբ	2016 թ. 2008 թ. նկատմամբ
Ընդամենը, այդ թվում՝	23,8	100,0	31,2	100,0	68,5	100,0	2,9	2,2
Բուսաբուծություն	14,7	61,8	21,2	68,0	36,0	52,6	2,4	1,7
Անասնաբուծություն	9,1	38,2	10,0	32,0	32,5	47,4	3,6	3,3

2016 թվականին հանրապետությունում գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունների ընդհանուր մակերեսը հասցվել է 66060.0 հեկտարի, այդ թվում, աշնանացան մշակաբույսերի տարածքներ՝ 56000.0 հեկտար, գարնանացան՝ 10060.0 հեկտար: 2015 թվականի համեմատ ընդհանուր ցանքատարածքների մակերեսներն ավելացել են 13850.0 հեկտարով կամ 26.5 տոկոսով: Ընդ որում, աշնանացան մշակաբույսերի ցանքատարածքներն ավելացել են 15345.8 հեկտարով կամ 37.7 տոկոսով, գարնանացան մշակաբույսերի ցանքատարածքները նվազել են 1496.0 հեկտարով կամ 13.0 տոկոսով:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՇԱԿԱԲՈՒՅՍԵՐԻ ՑԱՆՔԱՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

/հեկտար/

	2015թ.	Տոկոսներով ընդամենի նկատմամբ	2016թ.	Տոկոսներով ընդամենի նկատմամբ
Ընդամենը	***52210.2***	***100.0***	***66060.0***	***100.0***
Աշնանացան մշակաբույսեր	40654.2	77.9	56000.0	85.0
Գարնանացան մշակաբույսեր	11556.0	22.1	10060.0	15.0

Հաշվետու տարում ցանքատարածքների գերակշռող մասը՝ 59705.6 հեկտարը (93.8 տոկոս), կազմել են հացահատիկային մշակաբույսերի ցանքատարածքները: Նախորդ տարվա համեմատ, հացահատիկայինների ցանքատարածքներն ավելացել են 11401,2 հեկտարով կամ 19.1 տոկոսով:

ՀԱՑԱՀԱՏԻԿԱՅԻՆ ՄՇԱԿԱԲՈՒՅՍԵՐԻ ՑԱՆՔԱՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

/հեկտար/

	2015թ.	**2016թ.**	**Աճի տեմպը, %**
Հացահատիկային մշակաբույսեր	**48304.4**	**59705.6**	**123.6**
ցորեն	24019.0	33581.6	139,8
գարի	18227.0	23026.1	126,3
հաճար	2829.9	1817.7	64,2
եգիպտացորեն	3228.5	1280,2	39,6

Ինչպես նախորդ տարիներին, 2016 թվականին ևս հացահատիկային մշակաբույսերի բերքահավաքն անկորուստ կազմակերպելու նպատակով ստեղծվել է հանրապետական օպերատիվ շտաբ: Վերջինիս կողմից իրականացված արդյունավետ աշխատանքի շնորհիվ, բերքահավաքի ընթացքում հաջողվել է զերծ մնալ մասայական հրդեհներից: Ընդհանուր առմամբ, այդ ժամանակահատվածում այրվել է 51.5 հեկտար ցանքատարածք, ***այդ թվում՝***

Հ/h	**Շրջանի անվանումը**	**Ընդամենը հրդեհված տարածքներ**	**որից**	
			Ցորեն	**Գարի**
1	Հադրութ	11,9	6,1	5,8
2	Մարտակերտ	19,6	19,6	
3	Մարտունի	20,0	12,6	7,4
Ընդամենը		***51,5***	***38,3***	***13,2***

Հացահատիկային մշակաբույսերի բերքահավաքի աշխատանքներում ընդգրկվել է 226 միավոր կոմբայն, այդ թվում 57 միավոր՝ ՀՀ-ից:

Հանրապետությունում ցանված հացահատիկային մշակաբույսերի 59705,6 հա տարածքներից (ներառյալ եգիպտացորեն), ըստ օպերատիվ տվյալների, փաստացի

հնձվել է 58153,6 հեկտար կամ ցանված տարածքների 97,4 տոկոսը, կալսվել է 148011,9 տոննա հացահատիկ, միջին բերքատվությունը կազմել է 25,5 g/հա: Նախորդ տարվա համեմատ, հացահատիկային մշակաբույսերի համախառն բերքն աճել է 27854,7 տոննայով կամ 23,2 տոկոսով:

ՀԱՑԱՀԱՏԻԿԱՅԻՆ ՄՇԱԿԱԲՈՒՅՍԵՐԻ ՑԱՆՔԱՏԱՐԱԾՔՆԵՐԸ, ՀԱՄԱԽԱՌՆ ԲԵՐՔԸ ԵՎ ԲԵՐՔԱՏՎՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ՇՐՋԱՆՆԵՐԻ

Շրջանի անվանումը	Ցանված տարածքը (հա)			Հավաքվել է փաստացի (հա)			Կալսվել է (տ)			Բերքատվությունը (g/հա)	
	2015թ.	2016թ.	2016թ-ը 2015թ-ի նկատմամբ, %-ով	2015թ.	2016թ.	2016թ-ը 2015թ-ի նկատմամբ, %-ով	2015թ.	2016թ.	2016թ-ը 2015թ-ի նկատմամբ, %-ով	2015թ.	2016թ.
Ասկերան	10529,1	11994,4	113,9	9923,3	11810,4	119,0	25478,6	29458,5	115,6	25,7	24,9
Հադրութ	9029,5	10540,7	116,7	8634,0	9979,5	115,6	20789,1	25714,7	123,7	24,1	25,8
Մարտակերտ	4167,6	5643,3	135,4	3703,8	5335,8	144,1	8317,8	9875,0	118,7	22,5	18,5
Մարտունի	10394,4	13382,6	128,7	9745,9	13268,5	136,1	27417,2	38777,7	141,4	28,1	29,2
Շահումյան	26,0	133,2	512,3	26,0	133,0	511,5	56,3	365,2	648,7	21,7	27,5
Շուշի	202,7	200,4	98,9	194,0	200,4	103,3	345,8	333,5	96,4	17,8	
Քաշաթաղ	13955,1	17811,0	127,6	13378,5	17426,0	130,3	37752,4	43487,3	115,2	28,2	25,0
Ընդամենը	***48304,4***	***59705,6***	**123,6**	***45605,5***	***58153,6***	**127,5**	***120157,2***	***148011,9***	***123,2***	**26,3**	**25,5**

Ընդհանուր առմամբ, հնձվել է 33280,7 հեկտար ցորեն, 22261,4 հեկտար գարի, 1777,7 հեկտար հաճար և 833,8 հեկտար եգիպտացորեն: Կալսվել է 90394,8 տոննա ցորեն, 51372,0 տոննա գարի, 3222,4 տոննա հաճար և 3022,7 տոննա եգիպտացորեն: Միջին բերքատվությունը կազմել է, համապատասխանաբար, 27.2, 23,1, 18,1 և 36,3 g/հա: Բացի այդ, եգիպտացորենի տակ ցանված տարածքներից 307,0 հեկտար հնձվել է սիլոսի համար, հավաքվել է 7946,0 տոննա հատիկ, միջին բերքատվությունը կազմել է 258,8 g/հա:

ՑՈՐԵՆԻ, ԳԱՐՈՒ, ՀԱՃԱՐԻ ՈՒ ԵԳԻՊՏԱՑՈՐԵՆԻ ՑԱՆՔԱՏԱՐԱԾՔՆԵՐԸ, ՀԱՄԱԽԱՌՆ ԲԵՐՔԸ ԵՎ ԲԵՐՔԱՏՎՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ՇՐՋԱՆՆԵՐԻ 2016 ԹՎԱԿԱՆԻՆ

Շրջանի անվանումը	Ցորեն			Գարի			Հաճար			Եգիպտացորեն		
	Հավաքվել է փաստացի (հա)	Կալսվել է (տ)	Բերքատվությունը (գ/հա)	Հավաքվել է փաստացի (հա)	Կալսվել է (տ)	Բերքատվությունը (գ/հա)	Հավաքվել է փաստացի (հա)	Կալսվել է (տ)	Բերքատվությունը (գ/հա)	Հավաքվել է փաստացի (հա)	Կալսվել է (տ)	Բերքատվությունը (գ/հա)
Ասկերան	8834,2	23333,5	26,4	2297,0	4570,0	19,9	423,2	567,0	13,4	256,0	988,0	38,6
Հադրութ	3400,0	9395,0	27,6	6432,0	15916,5	24,7	2,0	3,2	16,0	145,5	400,0	27,5
Մարտակերտ	3474,0	6555,5	18,9	1387,0	2175,5	15,7	184,5	305,4	16,6	290,3	838,6	28,9
Մարտունի	8778,1	28326,5	32,3	4354,4	9715,5	22,3	22,0	39,3	17,9	114,0	696,4	61,1
Շահումյան	92,0	276,0	30,0	25,0	40,5	16,2	5,0	6,0	12,0	11,0	42,7	38,8
Շուշի	167,4	292,3	17,5				33,0	41,2	12,5			
Քաշաթաղ	8535,0	22216,0	26,0	7766,0	18954,0	24,4	1108,0	2260,3	20,4	17,0	57,0	33,5
Ընդամենը	***33280,7***	***90394,8***	***27,2***	***22261,4***	***51372,0***	***23,1***	***1777,7***	***3222,4***	***18,1***	***833,8***	***3022,7***	***36,3***

2016 թվականի բերքի տակ ցանված 456.0 հեկտար հնդկացորենի ցանքատարածքներից հնձվել է 438.0 հա, հավաքվել է 691.7 տոննա բերք, միջին բերքատվությունը կազմել է 15.8 գ/հա:

Շրջանի անվանումը	Բերքահավաքի ենթակա տարածքը (հա)	Փաստացի հավաքված ցանքատարածությունը (հա)	Փաստացի հավաքված բերքը (տ)	Միջին բերքատվությունը (գ/հա)
Ասկերան	130,0	130,0	188,0	14,5
Մարտակերտ	24,0	24,0	19,2	8,0
Մարտունի	281,0	263,0	463,5	17,6
Շուշի	21,0	21,0	21,0	10,0
ԸՆԴԱՄԵՆԸ ԼՂՀ	***456,0***	***438,0***	***691,7***	***15,8***

2016 թվականի բերքի տակ ցանված 1122.8 հեկտար արևածաղկի ցանքատարածքներից հնձվել է 831.8 հա, հավաքվել է 797.5 տոննա հատիկ և 410.0 տոննա՝ սիլոսի համար, միջին բերքատվությունը կազմել է, համապատասխանաբար, 10.3 և 75.2 գ/հա:

ԱՐԵՎԱԾԱՂԿԻ ՑԱՆՔԱՏԱՐԱԾՔՆԵՐԸ, ՀԱՄԱԽԱՌՆ ԲԵՐՔԸ ԵՎ ԲԵՐՔԱՏՎՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ՇՐՋԱՆՆԵՐԻ 2016 ԹՎԱԿԱՆԻՆ

Շրջանի անվանումը	Ցանված տարածքը (հա)	Հնձվել է (հա)		Հավաքվել է (տոննա)		Բերքատվությունը (g/հա)	
		հատիկի համար	սիլոսի համար	հատիկի համար	սիլոսի համար	հատիկի համար	սիլոսի համար
Ասկերան	326,9	309,2	10,5	338,0	160,0	10,9	152,4
Հադրութ	590,0	320,0		288,0		9,0	
Մարտակերտ	100,0	100,0		135,3		13,5	
Մարտունի	61,9	48,1		36,2		7,5	
Քաշաթաղ	44,0		44,0		250,0		56,8
Ընդամենը	***1122,8***	***777,3***	***54,5***	***797,5***	***410,0***	***10,3***	***75,2***

Հաշվետու տարում հանրապետությունում առկա բերքահավաքի ենթակա 1868.1 հա խաղողայգիներից հավաքվել է 1627.6 հա տարածք, համախառն բերքը կազմել է 2969.4 տոննա, միջին բերքատվությունը՝ 18.2 g/հա:

ԽԱՂՈՂԻ ՏՆԿԱՐԿՆԵՐԻ ՄԱԿԵՐԵՄՆԵՐԸ (ՊՏՂԱՏՈՒՀԱՄԱԿՈՒՄ), ՀԱՄԱԽԱՌՆ ԲԵՐՔԸ ԵՎ ԲԵՐՔԱՏՎՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ՇՐՋԱՆՆԵՐԻ 2016 ԹՎԱԿԱՆԻՆ

Շրջանի անվանումը	Հավաքվել է (հա)		Համախառն բերքը (տոննա)		Բերքատվությունը (g/հա)	
	2015թ.	2016թ.	2015թ.	2016թ.	2015թ.	2016թ.
Ասկերան	148.1	150.1	929.5	379.3	62.8	25.3
Հադրութ	145.0	80.0	397.5	510.0	27.4	63.8
Մարտակերտ	28.0	68.1	254.0	398.6	90.7	58.5
Մարտունի	887.5	1226.6	10968.5	1575.3	123.6	12.8
Շահումյան	4.0	4.0	12.0	14.0	30.0	35.0
Շուշի		1.5		0.2		1.3
Քաշաթաղ	75.0	96.0	360.0	84.2	48.0	8.8
Ընդամենը	***1287.6***	***1626.3***	***12921.5***	***2961.6***	***100.4***	***18.2***

Վերջին տարիներին լուրջ ներդրումներ են իրականացվում ծխախոտի մշակության զարգացման բնագավառում:

2016 թվականին «ՄԱՍԻՍ ՏՈԲԱԿՈ» ընկերությունը շարունակել է աջակցել Ասկերանի, Մարտակերտի, Մարտունու շրջանների հողօգտագործողներին ծխախոտի մշակության աշխատանքներն ագրոտեխնիկական պահանջներին համապատասխան կազմակերպելու հարցում:

Հաշվետու տարում հանրապետությունում 162,9 հա-ի վրա մշակվել է ծխախոտ: Սույն ցուցանիշը նախորդ տարվա համեմատ աճել է 16,4 հեկտարով կամ 11,1 տոկոսով, համախառն բերքը կազմել է 1770.35 տոննա, ինչը նախորդ տարվա համեմատ աճել է 425.35 տոննայով կամ 31,6 տոկոսով, մեկ հեկտարի միջին բերքատվությունն աճել է 12.0 ցետներով կամ 10,9 տոկոսով:

ԾԽԱԽՈՏԻ ՑԱՆՔԱՏԱՐԱԾՔՆԵՐԸ, ՀԱՄԱԽԱՌՆ ԲԵՐՔԸ ԵՎ ԲԵՐՔԱՏՎՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ՇՐՋԱՆՆԵՐԻ 2016 ԹՎԱԿԱՆԻՆ

	Ասկերան		Մարտակերտ		Մարտունի		***Ընդամենը***	
	2015թ.	2016թ.	2015թ.	2016թ.	2015թ.	2016թ.	***2015թ.***	***2016թ.***
Ցանվել է (հա)	38.0	48,5	7.5	28,0	101.0	86,4	***146.5***	***162,9***
Հավաքվել է (հա)	34.0	48,5	5.0	10,0	83.1	86,4	***122.1***	***144,9***
Համախառն բերքը (տ)	293.0	428.45	0.5	37.2	1051.5	1304.7	***1345.0***	***1770.35***
Բերքատվությունը (g/հա)	86.2	88.3	1.0	37.2	126.5	151	***110.2***	***122.2***

Նոյեմբեր ամսում հանրապետության տարածքում հաստատված բացասական ջերմաստիճանի հետևանքով մասնակի տուժել են ծխախոտի ցանքատարածքները: Հողօգտագործողների կրած ֆինանսական կորուստները որոշակիորեն մեղմացնելու նպատակով, ԼՂՀ կառավարության կողմից ընդունված որոշման համաձայն, 2016 թվականին ցրտահարությունից տուժած հողօգտագործողներին ոչնչացված բերքի յուրաքանչյուր 1 կիլոգրամի դիմաց միանվագ տրամադրվել է 30 ՀՀ դրամ գումարի չափով պետական աջակցություն: Ցրտահարությունից ոչնչացվել է 725000 կիլոգրամ բերք, որի դիմաց, ընդհանուր առմամբ, տրամադրվել է 21 750,0 հազար ՀՀ դրամ:

Հանրապետությունում կայուն բուսասանիտարական վիճակի պահպանման նպատակով «Բույսերի պաշտպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի կողմից շուրջ 72.8 հազար հեկտարի վրա կատարվել են դաշտային հետազոտություններ և ցանքսերի բուսասանիտարական վիճակի ուսումնասիրություններ: Թունանյութերի լաբորատորիայում իրականացվել է 165 նմուշի հետազոտություն, իսկ ագրոքիմիական լաբորատորիայում՝ հողերի 845/4225 և հանքային պարարտանյութերի 10/22 նմուշ/անալիզներ:

«Սերմնաբուծության, սելեկցիոն նվաճումների փորձարկման, պահպանության և սերմերի որակի ստուգման կենտրոն» ՓԲԸ կողմից աշնանացան ցորենի առաջնային սերմնաբուծության նպատակով 2016 թվականի բերքի տակ ցանվել էր 251,5 հեկտար

ցորեն: Ընդհանուր առմամբ, հավաքվել է 667846,0 կգ բերք՝ բունկերային քաշով, որից պատրաստվել է 562100.0 կգ աշնանացան «Կրասնոդարսկայա 99» սորտի սերմացու:

Նշված տարում շարունակվել են բուսաբուծության ճյուղի արդյունավետության բարձրացմանն ուղղված ծրագրերը, ինչպես նաև, պետական աջակցության շրջանակներում սերմերի, պարարտանյութերի, թունանյութերի՝ հողօգտագործողներին մատչելի պայմաններով տրամադրման աշխատանքները:

Շարունակվել է նաև Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ասկերանի, Հադրութի, Մարտունու և Շահումյանի շրջանների գյուղատնտեսության զարգացման 2016 թվականի ծրագիրը, որի շրջանակում իրականացվել են ինչպես գյուղատնտեսական, այնպես էլ գյուղատնտեսական աշխատանքների արդյունավետությունը բարձրացնող ենթակառուցվածքների բարելավման միջոցառումներ: Մասնավորապես, ձեռք են բերվել և անհատույց տրամադրվել 16895 հատ տարբեր տեսակի տնկիներ, բազմամյա կերային խոտաբույսերի մշակության համար տրամադրվել են անհրաժեշտ քանակությամբ սերմացու և դիզվառելիք:

Հաշվետու տարում իրագործվել է նաև «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Շուշիի շրջանի մի շարք համայնքներում բազմամյա խոտաբույսերի մշակության 2016 թվականի ծրագիրը»: Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կերարտադրության և անասնաբուծության զարգացման 2015-2017 թվականների ծրագրի շրջանակում 1 832 000 ՀՀ դրամով ձեռք է բերվել և Շուշիի շրջանի վարչակազմին տրամադրվել 5 000 կիլոգրամ կորնգանի սերմ, 5 380 լիտր դիզելային վառելիք, 1 651 000 ՀՀ դրամ տրամադրվել է որպես աշխատավարձ՝ կորնգանի տակ նախատեսված տարածքների մշակության համար:

Հաշվետու ժամանակահատվածում մեկնարկել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում գարնանացան մշակաբույսերի ցանքաշրջանառության խթանման 2016 թվականի ծրագիրը, որի շրջանակում ծխախոտի մշակությունից ստացված բերքի մթերման համար հողօգտագործողներին է տրամադրվել մեկ կիլոգրամի դիմաց 10 ՀՀ դրամ լրավճար. «ՄԱՍԻՍ ՏՈԲԱԿՈ» ՍՊԸ-ին մթերված 1770.35 տոննա ծխախոտի հումքի դիմաց տրամադրվել է 17 703 500 ՀՀ դրամ:

Բանջարեղեն մշակող հողօգտագործողներին 1 հեկտարի դիմաց տրամադրվել է 200 000 ՀՀ դրամ կամ գումարին համարժեք ապրանքանյութեր (ամոնիակային սելիտրա՝ 76.6 տոննա): Բանջարեղենի մշակության համար տրամադրվել է 45000,0

հազար ՀՀ դրամ գումար՝ 225,0 հա տարածքի դիմաց: Յուղատու մշակաբույսեր, հնդկացորեն և սորգո մշակելու համար 1 հեկտարի դիմաց անհատույց տրամադրվել են սահմանված քանակությամբ սերմ և հանքային պարարտանյութեր: Ընդհանուր առմամբ, տրամադրվել են 40.0 տոննա հնդկացորենի, 6.9 տոննա արևածաղկի, 8.0 տոննա սոյայի սերմ և ցանվել է, համապատասխանաբար, 500.0 հա, 1200.0 հա և 80.0 հա տարածք, ինչպես նաև 130.0 տոննա ֆոսֆորական և 220.0 տոննա կալիումական պարարտանյութեր:

2016 թվականին ԱՀ գյուղատնտեսության նախարարությունը հանրապետության հողօգտագործողների մասնագիտական գիտելիքների կատարելագործման նպատակով կազմակերպել է դասընթացներ, որոնց մասնակցել են հանրապետության շրջաններից ժամանած թվով 74 հողօգտագործողներ: Դասընթացներն անց են կացվել 2 փուլով, մասնակեցներին մանրակրկիտ մատուցվել են ինտենսիվ գյուղատնտեսության վարման համար հիմնաքարային հանդիսացող այնպիսի թեմաներ, ինչպիսիք են ցաքաշրջանառությունը, դրա տեսակներն ու մեր բնակլիմայական պայմաններում օրինակելի սխեմաները, ոռոգման արդի եղանակներն ու տարբեր մշակաբույսերի ոռոգման նորմաները, մշակաբույսերի ճշգրիտ սնուցումն ու հողի պարարտացումը, բույսերի հիվանդությունների ու վնասատուների դեմ պայքարի արդյունավետ միջոցների կիրառումը և այլն: Դասընթացների ավարտից հետո մասնակիցները հանձնել են քննություն և ստացել համապատասխան վկայականներ:

Անասնաբուծության ճյուղի արդյունավետության բարձրացման նպատակով 2016 թվականին շարունակվել են գյուղատնտեսական կենդանիների տոհմային ու մթերատու հատկանիշների բարելավման ուղղությամբ տարվող աշխատանքները:

Հաշվետու ժամանակահատվածում ավելացել են մսի, բրդի, մեղրի և նվազել կաթի ու ձվի արտադրության ծավալները, համապատասխանաբար՝ 8.2, 6.0, 6.5, 1.1 և 0.2 տոկոսով:

ԱՆԱՍՆԱԲՈՒԾԱԿԱՆ ՄԹԵՐՔՆԵՐԻ ԵՎ Հ ՈՒՄՔԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

	2015թ.	*2016թ.*	*Աճի տեմպը, %*
Միս (կենդանի քաշով), *տոննա*	11939.6	12928.0	108.2
Կաթ, *տոննա*	49500.7	48959.8	98.9
Ձու, *հազ. հատ*	40712.0	40658.4	99.8
Բուրդ, տոննա	288.7	306.2	106.0
Մեղր, տոննա	321.9	343.0	106.5

2017 թվականի հունվարի 1-ի դրությամբ ԱՀ-ում խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը կազմել է 46743 գլ, այդ թվում կովեր՝ 18999 գլուխ, խոզեր՝ 19499 գլուխ, մանր եղջերավոր անասուններ՝ 95139 գլուխ, թռչուններ՝ 341044 թև: Աճի տեմպը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ կազմել է, համապատասխանաբար, 102.6 , 100.0 , 101.0, 109.8 և 96.1 տոկոս:

ԱՆԱՍՆԱԳԼԽԱՔԱՆԱԿԻ ԱՃԻ ՏԵՄՊԸ ՆԱԽՈՐԴ ՏԱՐՎԱ ՆՈՒՅՆ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԻ ՆԿԱՏՄԱՄԲ

Անասնատեսակ	**խ.ե.ա**	**կով**	**խոզեր**	**մ.ե.ա**	**թռչուն**
01.01.2016	45536	18997	19287	86611	354812
01.01.2017	46743	18999	19499	95139	341044
աճի տեմպը %	102.6	100.0	101.0	109.8	96.1
աճի տեմպը +-	1207	2	212	8528	- 13768

Նշված տարում բարձրացել է կովերի կաթնային մթերատվությունը. աճի տեմպը կազմել է 109.5 տոկոս, որը պայմանավորված է տեղական նախրի մթերատվության բարձրացման ուղղությամբ իրականացվող ծրագրերի՝ տոհմային ցուլերի և տոհմային ցածր մթերատու կովերի տրամադրման և արհեստական սերմնավորման իրականացման արդյունավետությամբ: Բարձացել է նաև հավերի միջին ձվատվությունը՝ կազմելով 113.6 տոկոս, մեղվաընտանիքի միջին մեղվատվությունը՝ 104.0 տոկոս, ոչխարների բրդատվությունը՝ 100 տոկոս:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՄԹԵՐԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ 2015-2016 թթ.

	2015թ	*2016թ*	*Աճի տեմպը, %*
1 կովի միջին կաթնատվությունը, կգ	2146	2350	109.5
1 ածան հավի միջին ձվատվությունը՝ հատ	190	216	113.6
1 մեղվաընտանիքի միջին մեղվատվությունը	12.2	12.7	104.0
1 ոչխարի միջին բրդատվությունը՝ կգ	2.8	2.8	100.0

«Տոհմային կայան» ՓԲԸ-ում 2016 թվականին արտադրվել է շուրջ 515.9 տ կաթ, որից իրացվել է շուրջ 467.2 տոննա:

Տեղական անասնագլխաքանակի տոհմային և մթերատու հատկանիշների բարելավման նպատակով 2011 թվականից շարունակում է գործել տոհմային կենդանիների տրամադրման ծրագիրը, որի շրջանակում 2016 թվականին տոհմային տնտեսություններից («Տոհմային կայան» ՓԲԸ և «Արմ-Ագրո» ՍՊԸ) արտոնյալ պայմաններով հանրապետության ֆերմերներին է տրամադրվել 211 տոհմային կենդանի, այդ թվում 127 գլուխ տոհմային ցուլ և 84 գլուխ տոհմային ցածր մթերատու կով:

Հաշվետու ժամանակաշրջանում իրագործվել է նաև կենդանիների արհեստական սերմնավորման ծրագիրը, որի նպատակն է տեղական նախրի բարելավումը: Ծրագրի շրջանակում իրականացվել է 215 գլխի արհեստական սերմնավորում:

Հաշվետու տարում իրականացված անասնաբուժասանիտարական միջոցառումների շնորհիվ հաջողվել է հանրապետությունում պահպանել անասնահամաճարակային կայուն իրավիճակ, բացառությամբ՝ բրուցելյոզ, խոզերի աֆրիկական ժանտախտ հիվանդությունների առանձին դեպքերի, որոնց տարածման կանխման և հիվանդ անասունների բուժման նպատակով օպերատիվ կերպով իրականացվել են համապատասխան բուժկանխարգելիչ միջոցառումներ:

Ընդհանուր հաշվով, հաշվետու ժամանակահատվածում կատարվել է շուրջ 1.5 մլն կանխարգելիչ սրսկում և խոշոր ու մանր եղջերավոր անասունների բրուցելյոզ հիվանդության նկատմամբ շուրջ 130852 գլխի արյան նմուշի շիճուկաբանական հետազոտություն:

2016 թվականին վերամշակող ընկերությունների կողմից մթերվել է 1413.1 տոննա պտուղ-բանջարեղեն, ինչը 2015 թվականի համեմատ նվազել է 5 տոկոսով: Հաշվետու տարում մթերվել է 2120.9 տոննա կաթ, ինչը նախորդ տարվա ցուցանիշի համեմատ նվազել է 30.2 տոկոսով:

Հաշվետու տարում շարունակվել են գյուղատնտեսական տեխնիկայի պարկի թարմացան ու վերազինման աշխատանքները: Մասնավորապես, լիզինգային եղանակով հանրապետություն է ներկրվել և տարբեր շրջանների տնտեսվարող սուբյեկտներին տրամադրվել 7 միավոր Դոյչ-Ֆահր 6040 մակնիշի հացահատիկահավաք կոմբայն, 4 միավոր Դոյչ-Ֆահր AGROTRAC 150 մակնիշի անիվավոր տրակտոր և այլ սարքավորումներ:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՌԿԱ ԻՆՔՆԱԳՆԱՑ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ՔԱՆԱԿԸ ԵՎ ՍԱՐՔԻՆՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆԸ

№	Շրջան	Տեխնիկայի տեսակը									
		Հաց. կոմբայն	Սարքին	Անիվավոր տրակտոր	Սարքին	Թրթուրավոր տրակտոր	Սարքին	Կցասայլ	Սարքին	Խոտհնձիչ	Սարքին
1	Ասկերան	**66**	54	**186**	148	**108**	87	**39**	31	**2**	2
2	Հադրութ	**49**	40	**91**	71	**55**	37	**30**	28	**1**	1
3	Մարտակերտ	**38**	32	**104**	101	**68**	47	**16**	15	**0**	
4	Մարտունի	**98**	84	**192**	157	**176**	121	**29**	24	**12**	9
5	Շուշի	**3**	2	**10**	8	**5**	3	**-**		**-**	
6	Քաշաթաղ	**19**	18	**71**	56	**6**	4	**7**	6	**-**	
7	Շահումյան	**0**	**-**	**5**	4	**2**	1	-		-	
8	Ստեփանակերտ	**24**	**22**	**80**	68	**64**	50	**5**	3	2	
Ընդամենը		**297**	**252**	**739**	**613**	**484**	**350**	**126**	**107**	**17**	**12**
Որից Գերմանական		**39**		**52**							
Սարքինություն %		**85**		**83**		**72**		**85**		**71**	

2017 թվականի հունվարի 1-ի դրությամբ հանրապետությունում առկա գյուղտեխնիկայի քանակը կազմել է 1537 միավոր:

Համաձայն ԼՂՀ Կառավարության N 483-Ա որոշման, հանրապետության ջրային ռեսուրսները համակարգող կառույցների կառավարումը 2015 թվականի հուլիսի 18-ից

հանձնվել է ԼՂՀ գյուղատնտեսության նախարարությանը, ինչը ենթադրում է հանրապետությունում ոռոգման համակարգերի արդիականացում ու նոր տեխնոլոգիաների և մեթոդների մշակում ու ներդրում, որոնց կիրառումը թույլ կտա ապահովել ջրօգտագործման համակարգի կարողությունների հզորացումն ու զարգացումը, մասնավորապես, կաթիլային և անձրևացման համակարգերի աստիճանական ներդրումը:

2016 թվականին այս ուղղությամբ կատարվել են հետևյալ աշխատանքները. «Ջրախնայողական տեխնոլոգիաների ներդրման խթանում» ծրագրով 2016 թվականին կաթիլային ոռոգման համակարգ է կառուցվել շուրջ 43,0 հա հողատարածքի վրա, այդ թվում՝ 9 հա նեկտարինի այգու և 23 հա ծխախոտի մշակության համար, 11 հա՝ անձրևացման եղանակով սոխի մշակության համար:

Ջրային համակարգերի օգտագործման և պահպանության պետական տեսչության 2016 թվականի տարեկան ստուգումների ծրագրի շրջանակում տեսչական ստուգումներ են իրականացվել 6 ջրամատակարար ընկերություններում, այդ թվում՝ 15 տեղամաս և ենթատեղամաս, որոնք ընդգրկում են հանրապետության 70 համայնքների խմելու ջրի համակարգերը և ամբողջ ոռոգման համակարգը:

Հաշվետու ժամանակահատվածում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության աշխատակազմի առանձնացված ստորաբաժանումների գործունեությունն ուղղված է եղել ԼՂՀ օրենսդրական դաշտով սահմանված դրույթների իրագործմանը:

Ստուգումներ են իրականացվել թվով 29 տնտեսավարող սուբյեկտներում, 9 տնտեսավարող սուբյեկտների նկատմամբ հարուցվել է վարչական վարույթ և նշանակվել տուգանք՝ ընդհանուր 440 000 ՀՀ դրամի չափով:

Ուսումնասիրություններ և դիտարկումներ են իրականացվել ընդհանուր 828 տնտեսավարող սուբյեկտներում, արդյունքում, հայտնաբերվել և խոտանվել է հետևյալ քանակությամբ սննդամթերք. մսամթերք՝ 123 կգ, կաթնամթերք՝ 40 կգ, թռչնամիս և ենթամթերք՝ 387 կգ, քաղցրավենիք և հրուշակեղեն՝ մոտ 109 կգ, զովացուցիչ ըմպելիքներ՝ մոտ 410 լ, այլ սննդամթերք՝ 77 կգ: Մոտ 2112 կգ թռչնամիս և ենթամթերք արտահանվել է ԼՂՀ շուկայից:

Հաշվետու տարում մայրաքաղաքում վաճառքի նպատակով անհրաժեշտ լաբորատոր փորձաքննության է ենթարկվել և իրացվել հետևյալ քանակությամբ միս. ԽԵԱ՝ 81907 կգ, ՄԵԱ՝ 6963 կգ, խոզ՝ 53863 կգ:

2016 թվականին հանրապետությունում հերթական անգամ նշվել է գյուղատնտեսության աշխատողի մասնագիտական տոնը, ինչի կապակցությամբ ոլորտի մի շարք ներկայացուցիչներ գյուղատնտեսության նախարարի և ԼՂՀ վարչապետի կողմից արժանացել են պարգևների: Մայրաքաղաքի Վերածննդի հրապարակում կազմակերպված ցուցահանդես-տոնավաճառին իրենց մասնակցությունն են բերել հանրապետության ավելի քան 200 համայնքների ներկայացուցիչներ, ինչպես նաև Արցախի տարածքում գործող տնտեսավարող սուբյեկտներ: Տոնավաճառին կատարվել է շուրջ 597225,0 մլն դրամի առևտուր՝ նախորդ տարվա՝ 209580,0 մլն դրամի դիմաց:

ԼՂՀ գյուղատնտեսության նախարարությունն իր պաշտոնական կայքէջի և հանրապետության առաջատար զանգվածային լրատվամիջոցների հետ սերտ համագործակցության միջոցով կազմակերպել է գյուղոլորտում տարվող քաղաքականության, նախարարության ու նրա կառավարման ոլորտում գործող պետական մարմնի, ՓԲԸ-ների ու ՊՈԱԿ-ների գործունեության լուսաբանումը, ապահովել իրականացվող աշխատանքների ու ծրագրերի թափանցիկությունը:

Նախարարությանը վերապահված լիազորությունների արդյունավետ իրականացումն ապահովելու նպատակով 2016 թվականին շարունակվել են ագրարային ոլորտը կարգավորող օրենսդրական դաշտը հետևողական կատարելագործելու ուղղությամբ իրականացվող աշխատանքները: Մասնավորապես, մշակվել և ընդունվել է ավելի քան հինգ տասնյակ իրավական ակտ, այդ թվում՝ 2 գերատեսչական նորմատիվ ակտ, 5 օրենք, 38 ԼՂՀ կառավարության որոշման և 5 ԼՂՀ վարչապետի որոշման նախագծեր:

Հաշվետու տարում նախարարություն մուտք գործած թվով 3004 տարբեր բնույթի գրությունները սահմանված կարգով ընթացքավորվել են: